

Սարգիս Ռ. Մելքոնյան

«Տգիտությունը, մտքերի շփոթությունը, քրիստոնեական լուսաւոր գաղափարների բացակայութիւնը մեր եկեղեցու համար նոյնչափ վտանգաւոր են ներկայում, ինչպէս Պարսից, Մոնղոլների և Սելջուկների վայրենի հալածանքներն անցեալում»<sup>1</sup>:

Գարեգին Ա. Հովսեփյան

## ԳԱՐԵԳԻՆ Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ. ԵՐԱՆԱՇՆՈՐՀ ՀԱՅՐԱՊԵՏՆ ՈՒ ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Մաս Բ: Բարենորոգչական ծրագրերը (1897–1917 թթ.)<sup>\*</sup>

**Բանալի բառեր** – Գարեգին Հովսեփյան, Սուրբ Էջմիածին, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսություն, Ալաթիլիաս, Գևորգյան հոգևոր ձեռնարան, Հայ եկեղեցու բարենորոգչություն, Մաղաքիա Օրմանյան, «Արարատ» հանդես:

### Մուտք

Այս հրապարակմամբ շարունակում ենք 1943–1952 թթ. Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Ա. Հովսեփյանին նվիրված մեր հոդվածաշարը, որի առաջին մասը տպագրվել է «Վէմ» հանդեսի նախորդ համարում<sup>2</sup>: Դրանում մանրամասնությամբ անդրադարձել ենք հայրենի Արցախում, Սբ. Էջմիածնում և Գերմանիայում Գարեգին Հովսեփյանի երկարամյա ուսումնառության տարիներին (1877–1897 թթ.)՝ զուգահեռաբար ներկայացնելով նաև այդ ընթացքում ապագա հայրապետի ծավալած գիտական գործունեությունը:

Ներկա հոդվածով ընթերցողին ենք ներկայացնում Գարեգին Հովսեփյանի կողմից 1897–1917 թթ. Սբ. Էջմիածնում ծավալած գործունեության ընթացքում առաջադրված տարբեր բարենորոգչական ծրագրերը, որոնք

1 Յովսէփեան Գ. վրդ., Եկեղեցի Հայաստանեայց. Մար Աթոռի Մատենադարանը, «Արարատ» հանդէս, Սբ. Էջմիածին, 1901, էջ 18–19:

<sup>\*</sup> Հոդվածն ընդունվել է տպագրության 14. 07. 2018:

2 Տես Մելքոնյան Ս. Ռ., Գարեգին Ա. Հովսեփյան. Երանաշնորհ հայրապետն ու մեծ գիտնականը. Մաս Ա. Ուսումնառության տարիները (1877–1897 թթ.), «Վէմ» հանդես, N 1 (61), հունվար–մարտ, Եր., 2018, էջ 1–XXIX:

Ժ (ԺԶ) քաթի. թիվ 2 (62), ասրիլ-հունիս, 2018  
Վէմ համահայկական հանդես

ուղղված էին Հայոց եկեղեցին բարեկարգելուն և նորոգելուն:

Ինչպես արդեն նշել ենք, մեր ուսումնասիրության առաջին մասում<sup>3</sup>, Հայոց եկեղեցու պատմության ժԹ դարի վերջին քառորդից Ի դարի առաջին կեսն ընկած ժամանակաշրջանը նշանավորվեց եվրոպական համալսարաններում ուսանած մի քանի երիտասարդ հոգևորականների նախաձեռնած բարենորոգչական շարժմամբ, որի հիմքը գործնականում դրել էր **Մաղաքիա եպիսկոպոս Օրմանյանը**: Հայաստանի արևելյան հատվածում Օրմանյան սրբազանի գործունեությունը հատկապես նշանակալի եղավ, երբ վերջինս Հայոց եկեղեցու բարենորոգման նախաձեռնություններն անթաքույց հովանավորող Մակար Ա. կաթողիկոսի հրավերով Սբ. Էջմիածնում ստանձնեց Գևորգյան հոգևոր ձեմարանի աստվածաբանական և կրոնագիտական առարկաների դասավանդումը: Սբ. Էջմիածնում վարած իր մեկամյա (1887-1888 թթ.) գործունեության արդյունքը եղավ այն, որ նրա աշակերտներից մի քանիսը՝ **Կարապետ Տեր-Մկրտչյանը, Գարեգին Հովսեփյանը և Գևորգ Չորեքչյանը**, որոշում կայացրին՝ ընդգրկվելու Մայր Աթոռի միաբանության շարքերը՝ Գևորգյան ձեմարանի հիմնադրման թվականից (1874 թ.) ի վեր դառնալով առաջին ուսանողները, որ նման ցանկություն էին հայտնել: Սա մեծ բարեկարգում կարելի էր համարել, քանի որ ուսյալ հոգևորականներ պատրաստելու նպատակով հիմնված հոգևոր ձեմարանը շուրջ 15 տարի հետո առաջին անգամ ունենում էր շրջանավարտներ, որոնք ցանկություն էին հայտնում դառնալ հոգևորականներ: Գերմանական համալսարանների իրենց ուսումն ավարտելուց և Էջմիածին վերադառնալուց հետո նրանք, զբաղեցնելով տարբեր պաշտոններ, հանդես են եկել Հայոց եկեղեցին բարենորոգելու տարբեր առաջարկներով:

Իր գործունեությամբ շատ արագ գրավելով ռուսական իշխանությունների ուշադրությունը՝ Մաղաքիա եպս. Օրմանյանը ստիպված է լինում ձնշումների ներքո լքել Էջմիածինը և վերադառնալ Կոստանդնուպոլիս: Սակայն նա շարունակում է իր գիտակրթական գործունեությունը նաև Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքարանի իշխանության ներքո գտնվող արևմտահայ հոգևորականության շրջանում՝ 1889 թ. Նիկոմեդիայում հիմնելով Արմաշի հոգևոր ձեմարանը: Վերջինիս ուսուցիչներից էլիզա Դուրյանը, իսկ շրջանավարտներից՝ **Բաբկեն Կյուլեսերյանը, Թորգոմ Գուշակյանը և Գրիգոր Պալաքյանն**<sup>4</sup> էական մասնակցություն են ցուցաբերում Կոստանդնուպոլսի ու Երուսաղեմի պատրիարքությունների և Սսի կաթողիկոսարանի աշխատանքներում: Զգալի էր նրանց դերը նաև ցեղասպանությունից հետո Անթիլիասում հաստատված Մեծի Տանն Կիլիկիո

3 Տե՛ս Մելքոնյան Ս. Ռ., Գարեգին Ա. Հովսեփյան... էջ IV: ԺԹ. դարի վերջին քառորդին և Ի. դարի առաջին կեսին Հայոց Առաքելական եկեղեցում ընթացած բարենորոգչական շարժման մասին մանրամասնությամբ տե՛ս Gazer H. R., Die Reformbestrebungen in der Armenisch-Apostolischen Kirche im ausgehenden 19. und im ersten Drittel des 20. Jahrhunderts, Göttingen, 1996 (տույնի հայերեն թարգմանությունը տե՛ս Ղազարյան Խ. Բ., Բարենորոգչական նախաձեռնությունները Հայ Առաքելական եկեղեցում 19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դարի առաջին կեսին, գերմաներենից թարգմանեց՝ Ա. Հայրունին, Ս. Էջմիածին, 1999):

4 Բաբկեն Կյուլեսերյանի, Գրիգոր Պալաքյանի և Թորգոմ Գուշակյանի ծավալած բարենորոգչական գործունեության մասին մանրամասն տե՛ս Gazer H. R., նշվ. աշխ., էջ 133-153 (տույնի հայերեն թարգմանությունը տե՛ս Ղազարյան Խ. Բ., նշվ. աշխ., էջ 186-214:

կաթողիկոսությունում ծայր առած բարենորոգչական շարժման մեջ<sup>5</sup>:

Չնայած այն հանգամանքին, որ վերոնշյալ բոլոր անձիք կարևորագույն դերակատարություն են ունեցել ԺԹ դարի վերջից մինչև Ի դարի առաջին կեսն ընկած ժամանակահատվածում ծավալված Հայոց եկեղեցու բարենորոգչական շարժման մեջ, այնուամենայնիվ, ինչպես նշում է թեմայի շուրջ առկա խնդիրներն ու պատմական ընթացքը մանրամասնությամբ ուսումնասիրած Խաչիկ Բաֆֆի Գազերը, իբրև բարենորոգիչ՝ Գարեգին Հովսեփյանը հետաքրքրական է նաև այն պատճառով, որ ի տարբերություն բարենորոգչական շարժման շատ ներակայացուցիչների՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության գահը ստանձնելու արդյունքում (1943–1952 թթ.) նա կարողացել է գործնականում կիրառել Ի դարի առաջին քառորդին Սր. Էջմիածնում զարգացրած իր բարենորոգչական գաղափարները<sup>6</sup>:

## 1. Ուսումնառության ավարտն ու վերադարձը Սր. Էջմիածին

Այսպիսով, 1897 թ. փետրվարին գիտությունների դոկտորի աստիճանով ավարտելով իր ուսումը Գերմանիայում՝ Գարեգին սարկավազ Հովսեփյանը նույն թվականին վերադառնում է Հայաստան և սեպտեմբերից Գևորգյան հոգևոր ձեռնարանում ստանձնում է աստվածաբանություն ու հայոց մատենագրության պատմություն առարկաների դասախոսությունը<sup>7</sup>:

Մայր Աթոռ վերադառնալուց հետո 1897 թ. նոյեմբերի 30-ին Էջմիածնի Սր. Գայանե վանքում նա կուսակրոն քահանա է ձեռնադրվում՝ ձեռամբ Սուրբաս արքեպիսկոպոս Պարզեանցի<sup>8</sup> և մեկ ամիս անց Մկրտիչ Ա. Խրիմյան (Հայրիկ) կաթողիկոսի ղեկավարների 23-ի կոնդակով<sup>10</sup> նշանակվում է Մայր Աթոռի մատենադարանապետ: Այս ամենին զուգահեռ Գարեգին Հովսեփյանն աշխատակցում էր «Արարատ» ամսագրին, որի գլխավոր խմբագիր է նշանակվում 1900 թ. հունվարին<sup>11</sup>, սակայն կարճ ժամանակ անց ստիպված է լինում հիվանդության պատճառով թողնել այդ պարտականությունը և մեկնել Թիֆլիս: Հովսեփյանը կրկին զբաղեցնում է այս պաշտոնը 1906–1908 թթ.<sup>12</sup>:

Մինչ այդ Թիֆլիսում Մկրտիչ Ա. կաթողիկոսի կողմից նշանակվում է Սր. Սարգիս վանքի վանահայր և թեմի կենտրոնական խորհրդի ավագ անդամ, որը թեմական առաջնորդից հետո երկրորդ պաշտոնն էր: Կարճ ժամանակ

5 Տե՛ս Gazer H. R., նշվ. աշխ., էջ III, 129–133 (նույնի հայերեն թարգմանությունը տե՛ս Ղազարյան Խ. Բ., նշվ. աշխ., էջ 8, 181–186:

6 Տե՛ս նույն տեղում, էջ 52 (նույնի հայերեն թարգմանությունը տե՛ս Ղազարյան Խ. Բ., նշվ. աշխ., էջ 76:

7 Գարեգին Հովսեփյանի՝ Գերմանիայում ուսանած տարիների մասին տե՛ս Մելքոնյան Ս. Ռ., Գարեգին Ա. Հովսեփյան... էջ X–XIV:

8 Տե՛ս Կենսագրության երանաշնորհ Ս. Տ. Գարեգին Ա. Կաթողիկոս Յովսեփեանի, Ա. Ինքնակենսագրություն, «Հասկ», Անթիլիաս, 1952, յուլիս-սեպտեմբեր, էջ 225 (այսուհետ՝ Ինքնակենսագրություն):

9 Տե՛ս նույն տեղում:

10 Տե՛ս Մկրտիչ Ա. Կաթողիկոսի կոնդակը Ս. Էջմիածնի սինդոնի..., Գարեգին Ա. Յովսեփեան, Փաստաթղթերի և նիւթերի ժողովածու, հատոր Ա., կազմող՝ Գ. Առաքեան, Սր. Էջմիածին, 2017, էջ 20 (այսուհետ՝ Գարեգին Ա. Հովսեփյան, Վավերագրեր Ա.):

11 Տե՛ս Մկրտիչ Ա. Կաթողիկոսի կոնդակը Գարեգին Վարդապետ Յովսեփեանին... Թիւ 2, Գարեգին Ա. Հովսեփյան, Վավերագրեր Ա., էջ 21–23:

12 Տե՛ս Մկրտիչ Ա. Կաթողիկոսի կոնդակը Գարեգին Վարդապետ Յովսեփեանին... Թիւ 1732, Գարեգին Ա. Հովսեփյան, Վավերագրեր Ա., էջ 134–135: Կաթողիկոսական տեղապահ Գեորգ Արքեպիսկոպոս Սուրենեանցի հրամանը Գարեգին Վարդապետ Յովսեփեանցին՝ վերջինիս «Արարատ» ամսագրի խմբագրի պաշտոնից ազատելու մասին, Գարեգին Ա. Հովսեփյան, Վավերագրեր Ա., էջ 143–144:

անց կաթողիկոսի կարգադրությամբ թեմի առաջնորդը, որ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցն էր, վերադառնում է Մայր Աթոռ և Վրաստանի առաջնորդական փոխանորդ է նշանակվում Գարեգին վարդապետ Հովսեփյանը, որ մնում է այդ պաշտոնին 1901-1902 թթ.: Կարելի է ասել՝ սա Հովսեփյանի հովվական գործունեության առաջին փորձն էր: 1902 թ. նա ընտրվում է Ներսիսյան հոգևոր դպրոցի վերատեսուչ<sup>13</sup>:

Թիֆլիսում Գարեգին Հովսեփյանը հատկապես հնարավորություն է ունենում շփվելու ժամանակի հայ մտավորականության երևելի դեմքերի հետ, որպիսիք էին **Ղազարոս Աղայանը, Հովաննես Թումանյանը, Նիկոլ Աղբալյանը, Ավետիք Արասխանյանը** («Մուրճ» պարբերականի խմբագիր), **Մուրացյանը, Համբարձում Առաքելյանը** և այլք: 1900-1903 թթ. հատկապես ծանր եղան արևելահայության համար ցարական բռնաձնշումների տեսանկյունից, ինչի հետևանքով հայ մտավորականությանն արգելված էր ի մի հավաքվել: Օգտագործելով առաջնորդական փոխանորդի իր դիրքը՝ Գարեգին վարդապետը պարբերաբար առաջնորդարանում տարբեր հավաքույթներ էր կազմակերպում, որոնց ընթացքում ներկաներից որևէ մեկը դասախոսում էր կամ կարդում էր դեռևս չհրատարակված իր ստեղծագործությունը, ինչը հնարավորություն էր տալիս լսել նյութների կարծիքն ու քննարկման միջոցով ավելի կատարելագործել ստեղծագործությունը: **Հատկապես հիշատակելի է, որ Հովհաննես Թումանյանն իր «Մասունցի Դավիթը» առաջին անգամ այստեղ է կարդացել**<sup>14</sup>:

1902 թ. վերջերին Մկրտիչ Ա. կաթողիկոսի կողմից Գարեգին վարդապետը կանչվում է Սբ. Էջմիածին՝ ձեմարանում դասավանդելու<sup>15</sup>, ապա նույն թվականին նշանակվում է նաև Երևանի թեմական դպրանոցի տեսուչ<sup>16</sup>: Ինչպես ինքն է նշում. «Թեմական դպրանոցը Երևանի առհասարակ կռուի բոյնն էր. ամեն տարի որևիցե խռովություն էր պատահում. փոխում էին տեսուչը և ուսուցչական կազմը»<sup>17</sup>: Հովսեփյանն իր պաշտոնավարման երեք տարիների ընթացքում կարգավորում է դպրոցի գործունեությունը<sup>18</sup>:

Հաշվի առնելով Գարեգին վարդապետ Հովսեփյանի տեսչական հաջող գործունեությունը թեմական դպրոցում՝ Մկրտիչ Ա. Խրիմյան կաթողիկոսը 1905 թ. օգոստոսի 20-ի կոնդակով նրան նշանակում է Գևորգյան հոգևոր ձեմարանի տեսուչ<sup>19</sup>: Առաջին անգամ նա այս պաշտոնին է մնում մինչև 1906 թ. աշուն<sup>20</sup>, ապա կրկին նշանակվում է նույն պաշտոնին արդեն Գևորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսի կոնդակով 1915 թ. մայիսի 15-ին<sup>21</sup>:

Մեր ուսումնասիրության առանցքում գտնվող ժամանակաշրջանում, որ է 1897-1917 թթ., Գարեգին վարդապետ Հովսեփյանը բեղուն գործունեություն

13 Տե՛ս **Գարեգին Ա. Հովսեփյան**, Վավերագրեր Ա., էջ 50-52:

14 Տե՛ս Ինքնակենսագրություն, էջ 226:

15 Տե՛ս **Գարեգին Ա. Հովսեփյան**, Վավերագրեր Ա., էջ 57-58:

16 Տե՛ս Ինքնակենսագրություն, էջ 227:

17 Ինքնակենսագրություն, էջ 227:

18 Երևանի թեմական դպրոցում Գարեգին Հովսեփյանի գործելակերպին կարելի ծանոթանալ իր կազմած տեղեկագրից (տե՛ս **Գարեգին Ա. Հովսեփյան**, Վավերագրեր Ա., էջ 63-74):

19 Տե՛ս **Գարեգին Ա. Հովսեփյան**, Վավերագրեր Ա., էջ 76-77:

20 Տե՛ս Կարապետ Տեր-Մկրտչյանի, Գարեգին Հովսեփյանի և Երվանդ Տեր-Մինասյանի համատեղ դիմումը Խրիմյան Հայրիկ կաթողիկոսին Գևորգյան ձեմարանում ստանձնած ուսուցչական պաշտոններից իրենց ազատելու համար, **Գարեգին Ա. Յովսէփեան**, Վավերագրեր Ա., էջ 129-130:

21 Տե՛ս **Գարեգին Ա. Հովսեփյան**, Վավերագրեր Ա., էջ 178-179:

է ծավալել՝ զբաղեցնելով նաև այլ պատասխանատու պաշտոններ: Նշված տարիներին վերջինիս կատարած գիտական աշխատանքների լրջությունն այնքան մեծ է, իսկ բովանդակային ընդգրկումն ու քանակական ծավալներն այնքան լայն, որ դրանց արժևորման համար կարելի է գրել նույնիսկ մի ամբողջ մենագրություն:

Սակայն այս շրջանում Հովսեփյանի բարենորոգչական նախաձեռնությունների ուսումնասիրման համար հատկապես կարևոր նշանակություն ունեն նրա պաշտոնավարումները՝ որպես «Արարատ» հանդեսի գլխավոր խմբագիր և Գևորգյան հոգևոր ձեռնարանի տեսուչ:

Դեռևս 1900 թ. ստանձնելով «Արարատի» խմբագրության ղեկավարումը՝ Գարեգին վարդապետն օգտագործում է այն ժամանակներում հայության լայն շրջանակների կյանքում բացառիկ դերակատարություն ունեցող այս պարբերականի հարթակը՝ հանդես գալով մի շարք հրապարակախոսական և ազատ ոճով գրված հոդվածներով, որոնց զգալի մասն ուղղված էր Հայոց եկեղեցու և առհասարակ հայ ժողովրդի հասարակական կյանքի բարենորոգչական տարբեր խնդիրների բարձրաձայնմանը և լուծմանը: Այս տեսանկյունից հատկապես կարևոր նշանակություն ունի «Արարատի» 1900–1908 թթ. համարներում «**Եկեղեցի Հայաստանեայց**»<sup>22</sup> ընդհանուր խորագիրը կրող հոդվածաշարի հրապարակումը, որի յուրաքանչյուր հատվածով հեղինակն առանձին ենթավերնագրի ներքո ներկայացնում էր առկա որևէ խնդրի լուծմանը նվիրված իր ծրագրերը:

Գևորգյան հոգևոր ձեռնարանի տեսուչի պաշտոնը զբաղեցնելու տարիներին Գարեգին վարդապետ Հովսեփյանը ձեռնամուխ է լինում ձեռնարանի ուսումնական և վարչական բարեփոխումների գործին: Այս նպատակն իրագործելու համար Հովսեփյանը մի քանի բարենորոգչական ծրագրեր է կազմում<sup>23</sup>՝ ներկայացնելով դրանք նախ Մկրտիչ Ա. Խրիմյան, ապա Գևորգ Ե. Սուրենյանց կաթողիկոսներին: Հիմնվելով նրա՝ «Արարատ» հանդեսում հրատարակած վերոնշյալ հոդվածների և ձեռնարանի բարենորոգման համար կազմած նախագծերի վրա՝ կարող ենք հստակ ներկայացնել, որ Գարեգին վարդապետը Հայոց եկեղեցու բարենորոգումը պատկերացնում էր հետևյալ հիմնական խնդիրների լուծմամբ.

22 Տե՛ս Յովսեփեան Գ. Վրդ., Եկեղեցի Հայաստանեայց. Խմբագրութեան կողմից, «Արարատ» հանդէս, Սր. Էջմիածին, 1900, էջ 19–21; Եկեղեցի Հայաստանեայց. Քահանաների ընտրության եղանակը, «Արարատ» հանդէս, Սր. Էջմիածին, 1900, էջ 101–104; Եկեղեցի Հայաստանեայց. Գիտութիւն և Եկեղեցի, «Արարատ» հանդէս, Սր. Էջմիածին, 1900, էջ 373–378; Եկեղեցի Հայաստանեայց. Մայր Աթոռի Մատենադարանը, «Արարատ» հանդէս, Սր. Էջմիածին, 1901, էջ 18–25; Եկեղեցի Հայաստանեայց. Մայր Աթոռ որպէս բարեգործութեան կեդրոն, «Արարատ» հանդէս, Սր. Էջմիածին, 1901, էջ 210–215; Եկեղեցի Հայաստանեայց. Հայոց Եկեղեցին 1906 թուին, «Արարատ» հանդէս, Սր. Էջմիածին, 1907, էջ 33–43; Եկեղեցի Հայաստանեայց. Դպրոցը Եկեղեցու նախագալիսն է, «Արարատ» հանդէս, Սր. Էջմիածին, 1907, էջ 129–135; Եկեղեցի Հայաստանեայց. Պէտք է կազմակերպուենք, «Արարատ» հանդէս, Սր. Էջմիածին, 1907, էջ 323–330; Եկեղեցի Հայաստանեայց. Ժողովները Եկեղեցական կեանքում, «Արարատ» հանդէս, Սր. Էջմիածին, 1907, էջ 423–431; Եկեղեցի Հայաստանեայց. Դարձեալ դպրոցների մասին, «Արարատ» հանդէս, Սր. Էջմիածին, 1907, էջ 649–656; Եկեղեցի Հայաստանեայց. Մեր հոգևոր հայրենիքը, «Արարատ» հանդէս, Սր. Էջմիածին, 1907, էջ 768–775; Եկեղեցի Հայաստանեայց. Դարձեալ գիղական քահանաների մասին, «Արարատ» հանդէս, Սր. Էջմիածին, 1907, էջ 1025–1030; Եկեղեցի Հայաստանեայց. Հայոց Հայրապետական Աթոռը, «Արարատ» հանդէս, Սր. Էջմիածին, 1908, էջ 27–35; Ս. Էջմիածին միաբանութիւնը, «Արարատ» հանդէս, Սր. Էջմիածին, 1908, էջ 139–149; Մ. Աթոռի տպարանը, «Արարատ» հանդէս, Սր. Էջմիածին, 1908, էջ 245–253:

23 Գարեգին վարդապետ Հովսեփյանի տեսչական տարիներին Գևորգյան հոգևոր ձեռնարանի ուսումնական և վարչական բարեփոխումների ծրագրերը տես Գարեգին Ա. Հովսեփյան, Վավերագրեր Ա., էջ 109–11, 203–204, 260–262: Այս մասին տե՛ս նաև Մուշե վարդապետի նամակը Գևորգ վարդապետ Չորեքյանին, Երևանի Մեքրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան, Գարեգին Հովսեփյանի արխիվ, թղթ. 95, վավ. 448:

- ա) Մայր Աթոռի գիտահանրամատչելի պարբերականի բարենորոգում,
- բ) ծխական քահանաների կրթության և ընտրության խնդիրների բարենորոգում,
- գ) գիտության դերի բարձրացումը եկեղեցու բարենորոգման հարցում,
- դ) մայր Աթոռի մատենադարանը դարձնել կենտրոնական, հայագիտական լիակատար մատենադարան,
- ե) եկեղեցու գործուն ներգրավվածությունը բարեգործական և առհասարակ սոցիալական ամենատարբեր խնդիրներում,
- զ) գիտակրթական հաստատությունների բարեփոխման և եկեղեցում դպրոցի դերի բարձրացման անհրաժեշտություն,
- է) եկեղեցու կանոնա-իրավական համակարգի վերանայում և բարենորոգում,
- ը) գործուն տպարանի անհրաժեշտությունը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի ազդեցությունն ուժեղացնելու և հայության տարբեր շերտերում ամրապնդելու համար:

Ահա Գարեգին Հովսեփյանի բարենորոգչական ծրագրերի այն հիմնական ուղղությունները, որոնց վերլուծությունը կփորձենք իրականացնել մեր ուսումնասիրության այս մասում:

## 2. Մայր Աթոռի գիտահանրամատչելի պարբերականի բարենորոգման հարցը

1868 թ. մայիսի 1-ից Գևորգ Դ. Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի օրհնությամբ տարիներ ի վեր արդեն իսկ հրատարակվում էր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաջին պաշտոնաթերթը՝ «Արարատ» հանդեսը<sup>24</sup>: Ամենայն Հայոց կաթողիկոսության պաշտոնական լրագիրը լինելուց զատ՝ այն աստիճանաբար վերածվում է նաև գիտական, մասնավորապես հայագիտական, ուղղվածություն ունեցող հանդեսի, որտեղ պարբերաբար հրատարակվում էին Սբ. Էջմիածնի գիտնական միաբանների և ձեմարանականների հոդվածները՝ հայոց մատենագրության, պատմության, կրոնի և այլ թեմաներով:

«Արարատ» հանդեսի գիտական ընթացքը հատկապես իր բարձրակետին է հասնում, երբ 1897 թ. ամսագրի գլխավոր խմբագիր է նշանակվում Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը: Նրա պաշտոնավարման տարիներին (1897-1900 թթ.) «Արարատի» համարներում հրատարակվում են տարբեր գիտական հոդվածներ, թարգմանական աշխատանքներ, ինչպես նաև հայ և օտարազգի հայագետների տարբեր լեզուներով հրատարակված աշխատությունների գրախոսականներ:

Սակայն 1900 թ. ցանկանալով ավելի շատ ժամանակ հատկացնել Գևորգյան հոգևոր ձեմարանում ծավալած իր տեսչական գործունեությանը՝ Կարապետ վարդապետը խնդրում է ժամանակի Ամենայն Հայոց կաթողիկոս

24 «Արարատ» հանդեսի տպագրության պատմության և կարևոր նշանակության մասին մանրամասն տե՛ս Հատիտյան Ա., Քոլանջյան Ս., «Արարատ» ամսագրի պատմական դերն ու նշանակությունը, Մատենագրություն «Արարատ» ամսագրի, կազմող՝ Ս. Կոծիսյան, Սբ. Էջմիածին, 1970, էջ III-XVI:

Մկրտիչ Ա. Խրիմյանին ազատել իրեն «Արարատ»-ի գլխավոր խմբագրի պաշտոնից: Ընդառաջելով նրա խնդրանքին՝ Հայրիկն իր 1900 թ. հունվարի 10-ի կոնդակով<sup>25</sup> հանդեսի գլխավոր խմբագիր է նշանակում Գարեգին վարդապետ Հովսեփյանին<sup>26</sup>: Կոնդակում մասնավորապես կարդում ենք. «Եթե՛ Տ. Կարապետ վարդապետ Տեսուչ Հոգևոր ձեռնարանի ժառանգաւորաց Մ[այր] Աթոռոյ, որ ի 1897 ամէ մինչև ցայսօր ժամանակի արժանապէս և մեծաւ հնտութեամբ վարէր գոթուարին պաշտօն խմբագրութեան «Արարատ» անագրի, հրաժարի զարդիս առ դժուարութեան պաշտաման տեսչութեանն, արդ Մեր ընդ թախանձանս նորին հաճեալ և զհրաժարականն ընկալեալ՝ կարգենք զՔեզ ի պաշտաման խմբագրութեան անագրոյ Հարապետութեան մերոյ: Ակն ունենք զի և Դու որպէս կարող որ՝ գոյով արդէն իսկ աշխատակից «Արարատ»ի և հմուտ խմբագրական գործոց կարիս յաջողութեամբ վարել զայս պաշտօն և, առաւել ևս բարձրացուցանել զանուն անաթերթին Հայրապետութեան մերոյ»<sup>27</sup>:

Խրիմյան Հայրիկը նորանշանակ խմբագրին կոնդակով հրահանգում է զարգացնել «Արարատը» հատկապես հետևյալ չորս ուղղություններով<sup>28</sup>՝

- ա) **հանդեսում զետեղել գյուղական քահանաների և լայն հանրության համար օգտակար ու ընկալելի հոդվածներ՝ կրոնական, բարոյական, կրթական, գյուղատնտեսական, առողջապահական բովանդակությամբ,**
- բ) **գորացնել անագրի գիտական բաժինը պատմական, մատենագրական և հնախոսական հրապարակումներով՝ բարձրացնելով Սբ. Էջմիածնի միաբանության գիտական բարի համբավը,**
- գ) **անագրում տպվող առավել արժեքավոր աշխատություններն առանձնատիպ տետրակներով վերահրատարակել,**
- դ) **որևէ նյութական ծախս չխնայել, որպեսզի «Արարատի» հրատարակությունը լինի գեղեցիկ պատկերներով զարդարված, իսկ հնագիտական բովանդակությամբ հոդվածների պարագայում նյութի հետ պահանջված պատկերներով:**

Հիմնվելով Ամենայն Հայոց կաթողիկոսի նշյալ կոնդակում տեղ գտած ցուցումների վրա՝ Գարեգին Հովսեփյանն իր հեղինակած առաջին իսկ խմբագրականը<sup>29</sup> սվիրում է «Արարատ» հանդեսի հետագա ընթացքն ընթերցող հանրությանը ներկայացնելուն: Նախ նա նշում է, որ խմբագրի փոփոխությունն առանձնապես չի ազդելու մինչ այդ «Արարատ»-ի որդեգրած ուղղության վրա, քանի որ «Արարատ»-ը միայն մի ուղղութիւն կարող է ունենալ, եթէ տասնեակ խմբագիրներ էլ միմեանց յետևից փոխուին: Նա

25 Տես Մկրտիչ Ա. Կաթողիկոսի կոնդակը Գարեգին վարդապետ Յովսեփեանին... Թիւ 2, **Գարեգին Ա. Յովսեփեան**, Փաստաթղթերի և նիւթերի ժողովածու, հատոր Ա., կազմող՝ Գ. Ասազեան, Սբ. Էջմիածին, 2017, էջ 21 (այսուհետ՝ **Գարեգին Ա. Հովսեփյան**, Վավերագրեր Ա.):

26 Գարեգին Հովսեփյանի՝ «Արարատ» անագրի խմբագրությունում վարած գործունեության մասին տես նաև **Gazer H. R.**, Die Reformbestrebungen in der Armenisch-Apostolischen Kirche im ausgehenden 19. und im ersten Drittel des 20. Jahrhunderts, Göttingen, 1996, էջ 53 (նույնի հայերեն թարգմանությունը տես **Ղազարյան Խ. Բ.**, Բարենորոգչական նախաձեռնությունները Հայ Առաքելական եկեղեցում 19-րդ դարի վերջին քառորդին և 20-րդ դարի առաջին կեսին, գերմաներենից թարգմանեց՝ Ա. Հայրունին, Ս. Էջմիածին, 1999, էջ 77-78):

27 Մկրտիչ Ա. Կաթողիկոսի կոնդակը Գարեգին վարդապետ Յովսեփեանին... Թիւ 2, **Գարեգին Ա. Հովսեփյան**, Վավերագրեր Ա., էջ 21-22:

28 Տես նույն տեղում., էջ 22-23:

29 Տես **Յովսեփեան Գ. Վրդ.**, եկեղեցի Հայաստանեայց. Խմբագրութեան կողմից, «Արարատ» հանդես, Սբ. Էջմիածին, 1900, էջ 19-21:

Հայոց Հայրապետական Աթոռի պաշտօնական թերթն է, Ս. Էջմիածնի միաբանութեան բերանը, Հայաստանեայց Եկեղեցու միակ կրօնական-գիտական թերթը, որի Տէրը Հայոց Հայրապետն է»<sup>30</sup>:

Արժևորելով նախորդ խմբագրի գործունեությունը՝ Գարեգին Հովսեփյանն, այնուամենայնիվ, իր դիտարկումներն է անում ամսագրի հետագա հրատարակության ուղղությունների վերաբերյալ: Նա նշում է, որ «Արարատը» երկու նպատակ է ունենալու՝ մի կողմից լինել **քահանայական դասակարգի և միջին ընթերցող հանրության թերթ** և մյուս կողմից՝ **գիտական հրատարակությունների պարբերական**<sup>31</sup>:

**Առաջին նպատակն** իրականացնելու համար Գարեգին Հովսեփյանը դիմում է Հայաստանի տարբեր վայրերում բնակվող թղթակիցներին՝ հանդես գալ կրոնաբարոյագիտական, առողջապահական, գյուղատնտեսական, ինչպես նաև դպրոցական կյանքի վերաբերյալ հոդվածներով, որոնք կարող էին հարուստ ընթերցանության նյութ դառնալ ոչ միայն քահանաների համար, այլև «Արարատը» կղարձնեին **«քրիստոնյա կրթուած հայ ընտանեաց թերթ»**<sup>32</sup>: Այս հարցում խմբագիրը հայցում էր նաև նախկին ձեռնարանականների և հատկապես Սբ. Էջմիածնի միաբանակիցների աջակցությունը<sup>33</sup>, որոնք, ունենալով ժողովրդի լայն շրջանակների հետ շփման մեծ փորձ, կարող էին հանդես գալ օգտակար հոդվածներով այնպիսի թեմաների վերաբերյալ, որոնց կարիքն ուներ հասարակ ընթերցողը: Իր այս բաժնով «Արարատը» պետք է կրթեր հայ ժողովրդի՝ հեռավոր վայրերում ապրող զավակներին, որոնք տարբեր պատճառներով հեռվանում էին եկեղեցուց և ընկնում այլ հոսանքների ազդեցության տակ:

**Պարբերականի մյուս մասը**, որը գլխավորաբար պետք է նվիրվեր գիտական հրապարակումներին, ըստ Գարեգին Հովսեփյանի՝ պետք է մինչ այդ եղած ծավալից ավելի ընդարձակվեր<sup>34</sup>: Նա հույս էր հայտնում, որ Մայր Աթոռի միաբաններից և մյուս աշխատակիցներից գատ «Արարատի» գիտական բաժնին իրենց հոդվածները կտան նաև «դրսի բանասերները»<sup>35</sup>: Իսկ հավելվածի համար կոչ էր անում հանդես գալ մի քանի մասերից բաղկացած առանձին և ամբողջական աշխատություններով, որոնք խոստանում էր հեղինակներին հանձնել նաև առանձնատիպ հրատարակությամբ:

Այս ամենից գատ՝ Հովսեփյանի պաշտոնավարման ժամանակ «Արարատում» սկսվում են հրատարակվել պատկերազարդ հնագիտական հոդվածներ, ինչպիսիք մինչ այդ խուսափում էին տպագրել<sup>36</sup>, քանի որ դա կապված էր լրացուցիչ ծախսերի հետ: Այս առումով Գարեգին Հովսեփյանը գրում է հետևյալը. «Ցանկալի էր մանաւանդ Թ Ժ ԺԱ դարու ձեռագիրների նկարագրություններ հնագրութեան և մանրանկարչութեան պատմութեան համար արժէք ունեցող պատկերներով, վանքերի նկարագրություններ, պատկերներով, յատակագծով

30 Տե՛ս նույն տեղում, էջ 19:

31 Տե՛ս նույն տեղում, էջ 20:

32 Նույն տեղում:

33 Տե՛ս նույն տեղում:

34 Նույն տեղում, էջ 21:

35 Նույն տեղում:

36 Նույն տեղում:



և արձանագրություններով, գեղեցիկ խաչքարեր ևլն»<sup>37</sup>:

Մայր Աթոռի պարբերականի այսպիսի փոփոխություններն իսկապես բոլորովին այլ հարթության վրա պետք է բարձրացնեին միաբանության և Գևորգյան հոգևոր ձեռնարանի գիտական վարկանիշը՝ «Արարատը» դարձնելով եվրոպական հանդեսներին համահավասար հրատարակություն:

Սակայն, դժբախտաբար, Գարեգին վարդապետի և բարենորոգչական շարժման մյուս ջատագովների գաղափարական հակառակորդների ճնշման ներքո դեռևս կաթողիկոսական տեղապահ Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցի 1908 թ. նոյեմբերի 5-ի հրամանագրով<sup>38</sup> Գարեգին Հովսեփյանն ազատվում է «Արարատ» ամսագրի խմբագրի պաշտոնից: Հրամանագրում մասնավորապես կարդում ենք. «Ի նկատի առեալ, զի «Արարատ» ամսագիրը ըստ դերով խմբագրութիւնը ոչ ծառայէ նպատակի իւրում որպէս կրօնական թերթ և որպէս պաշտօնական բերան Ս. Էջմիածնի, թէև քանիցս արարեալ ենք Ձեզ նկատողութիւն, ուստի և այսու արձակենք զՁեզ ի պաշտօնէ խմբագրութեան»<sup>39</sup>:

Անշուշտ, միաբանության մեջ տիրող գաղափարական հակառակություններից զատ, կաթողիկոսական տեղապահի այսպիսի որոշման պատճառ պետք է հանդիսացած լիներ նաև Գարեգին վարդապետ Հովսեփյանի և Գևորգ արքեպիսկոպոս Սուրենյանցի միջև առկա անձնական հակամարտությունը: Խնդիրը կայանում էր նրանում, որ Գարեգին վարդապետը սպասվելիք կաթողիկոսական ընտրություններին ամենաընդունելի թեկնածու էր համարում իր ուսուցիչ Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանին: Այս մասին Հովսեփյանն անթաքույց խոսում է «Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան և Կաթողիկոսական ընտրութիւն, (Արտատպւած «Հայրենիքից»), Թիֆլիս, 1909» ոչ այդքան ծավալուն գրքույկի մեջ, որում նա, արժևորելով Օրմանյան սրբազանի գործունեությունը, փորձում էր տարբեր հիմնավորումներ ներկայացնել իր բռնած դիրքի օգտին<sup>40</sup>:

Ինչևէ, այս բոլորը վստահաբար իրենց ազդեցությունն են ունենում «Արարատի» խմբագրի պաշտոնից Գարեգին վարդապետին ազատելու որոշման վրա և վերջինս չի կարողանում տևական ժամանակ օգտագործել հանդեսի տված հնարավորություններն՝ իր գաղափարները և բարենորոգչական ծրագրերը հրապարակելու համար:

### 3. Ծխական քահանաների ընտրության եղանակի բարեկարգման հարցը

Մյուս հարցը, որին Գարեգին վարդապետն անդրադառնում է, ժամանակի համար չափազանց կարևոր նշանակություն ունեցող խնդիր էր հայության մեջ, որ վերաբերում էր քահանաների կրթությանն ու ընտրության կարգին<sup>41</sup>:

37 Նույն տեղում:

38 Տե՛ս Գարեգին Ա. Հովսեփյան, Վավերագրեր Ա., էջ 143-144:

39 Գարեգին Ա. Հովսեփյան, Վավերագրեր Ա., էջ 143:

40 Այս հարցում Գարեգին Հովսեփյանի մտահոգությունների մասին հակիրճ տե՛ս Յովսէփեան Գ. Վ., Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան և Կաթողիկոսական ընտրութիւն, (Արտատպւած «Հայրենիքից»), Թիֆլիս, 1909, էջ Ա-Բ:

41 Տե՛ս Յովսէփեան Գ. Վրդ., Եկեղեցի Հայաստանեայց. Քահանաների ընտրութեան եղանակը, «Արարատ»

Ըստ Գարեգին Հովսեփյանի, եկեղեցու կոչումն ու նպատակն է քրիստոնեական դաստիարակություն տալ իր հոտին Հիմնադրի հոգու ու վարդապետության համաձայն<sup>42</sup>: Սակայն նա անհնար էր համարում այդ առաքելության իրագործումն ու եկեղեցու բարենորոգումն առանց քահանայության բարեկարգման. «Չունենանք պարտաճանաչ և բանիմաց քահանայություն, ի գուր են մեր բոլոր յոյզերն ու տենչերը, որ կապուած են եկեղեցու գոյութեան և նպատակի հետ»<sup>43</sup>:

Կրոնական խնդիրներից գատ՝ ԺԹ դարի վերջի և Ի դարի սկզբի հայության համար կրթյալ քահանայության հարցն ուներ նաև ազգային-հասարակական կարևոր նշանակություն, քանի որ պետականության բացակայության պայմաններում համայնքների հիմնական ղեկավարները, կարելի է ասել, ծխական քահանաներն էին: Անշուշտ, համայնքներում կար նաև տանուտերերի պաշտոնը, սակայն ի տարբերություն քահանաների, նրանք ժամանակավոր պաշտոնյաներ էին, իսկ քահանաներն ընտրվում էին ցմահ: Չնայած այն հանգամանքին, որ եկեղեցու նվիրապետական աստիճանների մեջ քահանայությունը չէր գտնվում ամենաբարձր աստիճանի վրա, այնուամենայնիվ, ինչպես նշում է Գարեգին Հովսեփյանը, քահանաները կարևորագույն դերակատարություն ունեին եկեղեցում, քանի որ նրանք էին հանդիսանում ժողովրդի հետ անմիջապես շփվողները<sup>44</sup>: Մյուս կողմից, եթե բարձրաստիճան հոգևորականները բանիմաց և պարտաճանաչ քահանայություն չունենան իրենց ենթակայության տակ, ապա եկեղեցին «կնամնուի զօրապետութեան առանց զինուորներ»<sup>45</sup>:

Գարեգին Հովսեփյանը եկեղեցու նվիրապետությունը համեմատում է զինվորական կազմակերպության հետ, քանի որ ըստ նրա՝ «եկեղեցու ընթացքն ևս պատերազմական է, որովհետև իւր հաստատութեան օրից կոչուած է նա մարտ մղելու «աշխարհի», այսինքն խաւարի, չարութեան, անբարոյականութեան դէմ»<sup>46</sup>:

Սակայն շրջելով Հայաստանի տարբեր գավառներում՝ Գարեգին վարդապետն ականատես էր եղել ծխական քահանաների անընդունելի վիճակին, որի պայմաններում եկեղեցին չէր կարող լիարժեքորեն ծառայել իր վսեմ կոչմանը, քանի որ ինչպէս պետք է քահանաներն ուսուցանեին և դաստիարակեին հավատավոր ժողովրդին, երբ իրենք իսկ գաղափար չունեին իրենց ուսուցանելիք նյութի մասին<sup>47</sup>: Չցանկանալով ստեղծված իրավիճակի համար մեղադրել առանձին մարդկանց՝ Գարեգին Հովսեփյանն առաջադրում է մի քանի առանձին խնդիրներ, որոնց առկայությունն էլ համարում է քահանաների անկյալ վիճակի հիմնական պատճառները:

**Առաջին և նախնական** խնդիրը, որ քննարկում է Հովսեփյանն իր հոդվածում, «**քահանայության ընտրության այդ ժամանակ գործող կարգն էր**»<sup>48</sup>: Ըստ դրա՝ ժողովուրդը պարտավորվում էր համախոսական

---

հանդէս, Սբ. Էջմիածին, 1900, էջ 101-104:

42 Տեն նույն տեղում, էջ 101:

43 Տեն նույն տեղում:

44 Տեն նույն տեղում, էջ 101:

45 Նույն տեղում:

46 Նույն տեղում:

47 Տեն նույն տեղում, էջ 101-102

48 Տեն նույն տեղում, էջ 102:

ներկայացնել հոգևոր իշխանությանը, սակայն, ինչպես նշում է Գարեգին Հովսեփյանը, գրեթե առանց բացառությունների ընտրությունների ժամանակ «քահանայացուն անձամբ կամ նորա բարեկամներից մեկը նախօրոք պատրաստուած համախօսականը շրջեցնում է տնէ տուն, խանութէ խանութ և ստորագրել տալիս: Բաւական է ստորագրողների թիվը 100-ից անցաւ, համախօսականը պատրաստ է»<sup>49</sup>: Ընտրության այսպիսի կարգը հղի էր լրջագույն վտանգներով, քանի որ մի կողմից՝ քահանայության թեկնածուի հարագատներն ու աջակիցները դիմում էին անօրենությունների, իսկ մյուս կողմից՝ համայնքներում գործող կուսակցություններից յուրաքանչյուրը ձգտում էր առաջադրել իր թեկնածուին և ամեն ջանք ներ էր դնում, որպէսզի հաջողություն ունենա: Այս վերջին խնդիրն այնքան էր սրվել, որ, ինչպես նշում է Գարեգին Հովսեփյանը, նույնիսկ էջմիածնից ոչ հեռու միսյանց մոտ գտնվող երկու գյուղեր, որ հազիվ երկուսը միացած մի քահանա կարող էին պահել, երկուական «տիրացու» էին առաջադրել Կոնսիստորիային այն պատճառով, որ յուրաքանչյուր գյուղում երկու կուսակցություն կա<sup>50</sup>: Այսպիսի պայմաններում, անշուշտ, հաճախ ընտրվում էին մարդիկ, ում համայնքի մեծ մասը նույնիսկ չէր ճանաչում, ինչը հանգեցնում էր տարաբնույթ բարդությունների:

Այս խնդրի համար Գարեգին վարդապետ Հովսեփյանն առաջարկում էր ուրույն լուծում՝ սկսելով հետևյալ մտքից. «Քահանայացուի ընտրութիւնը պէտք է կատարուի այն եկեղեցու հօտի ընդհանուր ժողովում, որի համար նա միաբան է ընտրում»<sup>51</sup>: Այսպիսով պետք է բացառվեր, որ համայնքին անձանտթ մեկն ընտրվեր քահանա:

Ընտրությունները «Հոտի ընդհանուր ժողովում» կազմակերպելու պարագայում, ըստ Հովսեփյանի, մարդիկ կսկսեին ավելի լուրջ մոտենալ հարցին, ի տարբերություն նախկինում տիրող անլրջությանը, երբ «ամեն ոք աշխատում է շուտ ստորագրել փողոցում իրեն մատուցած թուղթը, գլուխն ազատելու կամ գործից ետ չընկնելու համար»<sup>52</sup>:

Ընտրություններն ըստ արժանվույն անցկացնելու համար Հովսեփյանն առաջարկում էր հետևյալը<sup>53</sup>.

ա) առանց ժողովի ազատ ընտրության իրավունքը խախտելու, հոգևոր վարչությունը պարտք և իրավունք պետք է ունենար՝ հսկելու ընտրության կանոնավորության վրա,

բ) գործընթացի դյուրության համար անհրաժեշտ էր ընտրության հրահանգներ հրատարակել, որով պետք է առաջնորդվեին թե՛ ծխականները և թե՛ ընտրողական ժողովին հսկող գործակալներն ու քահանաները,

գ) և վերջապէս, հոգևոր վարչության հսկողությունն ու մասնակցությունն օգտակար կլինէր նրանով, որ նա նախօրոք տեղեկություններ ստանար ընտրելիների բարոյական և ուսումնական արժանիքների մասին, արգելք կլինէր ընտրություններ կատարելու, երբ նոր քահանայի ձեռնադրության կարիք չէր լինի:

49 Նույն տեղում, էջ 102:

50 Տե՛ս նույն տեղում, էջ 102-103:

51 Նույն տեղում, էջ 103:

52 Նույն տեղում:

53 Տե՛ս նույն տեղում, էջ 103-104:

Բացի այս՝ ժողովն ինքը կարող էր առաջադրել թեկնածու, որը կունենար ժողովականների վստահությունը:

Անշուշտ, այս բարեփոխումները մեծապես կիզորացնեին ծխական համայնքները, սակայն, դժբախտաբար, ինչպես նշում է Խաչիկ Բաֆֆի Գազերը. «Հովսեփյանն իր ծրագրերը չկարողացավ կյանքի կոչել: Նրա սպասումները չափազանց լավատեսական էին՝ չհամապատասխանելով կրթության ընդհանուր բացակայությամբ ու գավառներում պիտանի մարդկանց սակավությամբ հատկանշվող իրականությանը»<sup>54</sup>:

***Ճարտնակությունը՝ հաջորդ համարում***

**Սարգիս Ռ. Մելքոնյան** – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է վարդապետական աստվածաբանությունը, Հայ եկեղեցու քրիստոսաբանության հարցերը, արևելյան եկեղեցիների դավանաբանության պատմությունը, միջեկեղեցական հարաբերությունների պատմական և ներկա գործընթացները:

Էլ. փոստ՝ [sargis.r.melkonyan@gmail.com](mailto:sargis.r.melkonyan@gmail.com)

---

<sup>54</sup> Gazer H. R., նշվ. աշխ., էջ 59 (սույնի հայերեն թարգմանությունը տե՛ս Ղազարյան Խ. Բ., նշվ. աշխ., էջ 81:

**GAREGIN I HOVSEPYAN. THE BLESSED PATRIARCH AND GREAT SCIENTIST**

Part II: The Reformative Programs (1897-1917)

Sargis R. Melkonyan

**Key words:** Garegin Hovsepyan, Holy Echmiadzin, Catholicosate of the Great House of Cilicia, Antelias, Gevorgyan Theological Seminary, reformation of Armenian church, Maghakia Ormanyan, periodical “Ararat”.

In the given publication, which is the continuation of the article dedicated to 150 anniversary of Garegin A. Hovsepyan – the Catholicos of the Great House of Cilicia, published in the previous issue of Panarmenian journal “Vem” analyzes the role of Garegin Hovsepyan and the programs put forward by him for the purpose of church’s reformation beginning from the end of XIX century up to the second half of XX century.

After finishing his education in Germany in 1897 he during 1897-1917 years came back to Echmiadzin and took rather serious offices, like, for instance the editor of official newspaper of Holy See and the inspection of Gevorgyan Theological Seminary. While taking these offices he came forth with programs for the reformation of Armenian Church which were mainly presented in different issues of periodical “Ararat” or in separate projects.

The analysis of these programs shows that Garegin Hovsepyan was offering to reform the church by paying attention on the following points,

- a) reform of Holy See’s popular scientific periodical,
- b) reform of parish clergymen’s education and election,
- c) raising the role of science in church reform,
- d) turning of Mother See’s library into central, fully Armenological library,
- e) the active participation of the church into charitable and in various common social issues,
- f) the need for reform of educational institutes and raising the role of school in Church,
- g) revision and reform of the Church’s statutory system,
- h) the need of acting publishing house for strengthening and securing the influence of Mother See of Holy Echmiadzin in different layers of the Armenians.

By taking into account the vast volume of the subject in the present publication we have only turned to reformative programs on a) Reformation of Holy See’s popular scientific periodical, b) Reform of parish clergymen’s education and election offered by Garegin Hovsepyan. We will turn to other points in the subsequent series of our article.

## ГАРЕГИН I ОВСЕПЯН: БЛАЖЕННЫЙ КАТОЛИКОС И ВЕЛИКИЙ УЧЕНЫЙ

Часть II. Реформаторские программы (1897-1917 гг.)

Саргис Р. Мелконян

**Ключевые слова** – Гарегин Овсепян, Святой Эчмиадзин, католикосат Великого Дома Киликии, Антилиас, духовная семинария Геворгян, реформирование Армянской церкви, Магакия Орманян, журнал «Арагат».

В настоящей публикации, являющейся продолжением напечатанной в предыдущем номере журнала «Вем» статьи, посвященной 150-летию католикоса Великого Дома Киликии Гарегина I Овсепяна, мы исследовали роль Гарегина Овсепяна в реформаторском движении в Армянской церкви с конца XIX века до середины XX века, и программы, выдвинутые им с целью реформирования церкви.

Окончив в 1897 г. учебу в Германии и вернувшись в Св. Эчмиадзин, он в 1897-1917 гг. занимал должности, имевшие весьма важное значение, как, например, должности редактора официальной газеты Первопрестольного монастыря, инспектора духовной семинарии Геворгян. Именно в годы службы в этих должностях он выступил с программами реформирования Армянской церкви, которые представлял в основном в статьях, опубликованных в разных номерах журнала «Арагат», или же как отдельные программы.

В результате анализа этих программ видим, что Гарегин Овсепян предлагал реформировать церковь, обращая внимание на следующие основные пункты:

1. реформирование научно-популярного периодического издания Первопрестольного монастыря,
2. реформирование обучения и выбора приходских священников,
3. повышение роли науки в вопросе реформирования церкви,
4. превращение библиотеки Первопрестольного монастыря в центральную арменоведческую полную библиотеку,
5. активная вовлеченность церкви в благотворительности и вообще в самых разных социальных задачах,
6. необходимость реформирования научно-образовательных учреждений и повышения роли школы в церкви,
7. пересмотр и реформирование каноническо-правовой системы церкви,
8. необходимость активно действующей типографии для усиления влияния Первопрестольного Св. Эчмиадзина и его утверждения в разных слоях армянской общественности.

Учитывая большой объем материала, в настоящей публикации мы обратились только к реформаторским программам, предложенным Гарегиним Овсепяном по 1-му и 2-му пунктам. Остальным пунктам будет посвящена следующая часть нашей серии статей.

## REFERENCES

1. **Yovsepyan G.** vrd. Yekegheci Hayastanyayc. Mayr Atori Matenadarany, "Ararat" hades, Sb ejmiatsin, 1901.
2. **Melqonyan R.**, Garegin A. Hovsepyan. Yernashnorh hayrapetn u mets gitnakany. mas A. Usumnarutyany tarinery (1877-1897 tt.), "Vem" hamahaykakan handes, N 1(61), hunvar-mart, Yer., 2018.
3. **Ghazaryan Kh.**, Barenorogchakan nakhadzernutyunnery Hay Araqelakan yekeghecum 19-rd dari verjin qarordin yev 20-rd dari arajin kesin, germanerenic targm. A. Hayrunin, S. Ejmiatsin, 1999.
4. **Kensagrutivn Yeranashnorh T. T.** Garegin A. Katoghikos Yovsepeani, A. Inqnakensagrutyun, "Hask", Antilias, 1952, yulis-september.
5. **Garegin A. Hovsepyan**, Pastatxteri yev nivteri zhoghovatsu, hator A, kazmogh G. Avagean, S. Ejmiatsin, 2017.
6. **Yovsepyan G.** Vrd., Yekegheci Hayastaneayc, khmbagrutyany koghmic, "Ararat" handes, Sb. Ejmiatsin, 1900.
7. **Hatityan A., Qolanjyan S.**, "Ararat" amsagri patmakan dern u nshanakutyuny, Matenagrutyun «Ararat» amsagri, kazmogh S. Kotsinyan, Sb. Ejmiatsin, 1970.
8. **Yovsepyan G.** Vrd. Yekegheci Hayastaneayc, Qahananeri yntrutean eghanaky, "Ararat" handes, Sb. Ejmiatsin, 1900.

ՀԱՅԿԵՑ

Ժ (ԺԶ) քաարի, թիվ 2 (62), ապրիլ-հունիս, 2018

ՎԼՎ համահայկական հանդես